ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-1»

Գ. Ծաղկահովիտ «10» 07 2018 թ.

<<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Արֆարմացիա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1 2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով, անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1 6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2 1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2 2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2 3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը՝

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում՝

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2 4 10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները՝

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է՝ 1 078,805 / մեկ միլիոն յոթանասունութ հազար ութ հարյուր հինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են*

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրմանից[1] պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում գումարանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ գարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

<<[illegible]>> ՓԲԸ

«ԱԿԲԱ [illegible]» ՓԲԸ

Արագածոտն [illegible] Հոկտեմբերյան

Տնօրեն՝

______ [illegible]կոբյան

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱՐՖԱՐՄԱՑԻԱ>> ՓԲԸ

Ք.Երևան,Րաֆֆու 111

Բանկ Հայէկոնոմբանկ ԲԲԸ

Տնօրեն՝

______

Հավել
«10» հոկ 2018թ թվ
«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-1» ծածկագրով պայմանագ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ապրանքի մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	33651111	Ամոքսիցիլլին օշարակ 250մգ/5մլ 100մլ	Սերբիա <<Հեմոֆարմ>>	Օշարակ 100մլ շշիկով,կոտրվող էմանակարգման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	շիշ	837	33 480	40	Արարատ մզի մարզ,գյուղ Շահկատով ի,Հոկտեմբերյան 16	40	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
5	33671119	Ասկորբինաթթու 2մլ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա>>	50մգ ասպակե սրվակ	Սրվակ	24,9	29 880	1200	Արարատ մզի մարզ,գյուղ Շահկատով ի,Հոկտեմբերյան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
8	33691138	Գլյուկոզա 5% 500մլ	Հայաստան <<ֆարմատեք>>	Լուծույթ կաթիլային ներարկման 5% ,500մլ պլաստիկ փաթեթով, երկրորդային վակուում փաթեթով,փախնեում է լույսից, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն,ֆիրմային նշանի առկայություն	Փաթեթ պլ	162	3 240	20	Արարատ մզի մարզ,գյուղ Շահկատով ի,Հոկտեմբերյան 16	20	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
11	33671130	Դիֆենհիդրամին 1% 1մլ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա>>	Լուծույթ ներարկման 1%, 1մլ ապակե սրվակով, կոտրվող է մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2	Սրվակ	21,85	78 660	3600	Արարատ մզի մարզ,գյուղ Շահկատով	3600	ապրիլ մայիս հունիս հուլիս

				առկայություն,ֆիրմային նշանի առկայություն					իր. Հոկտեմբեր յան 16		օգ... սեպտ... հոկտեմբ... նոյեմբեր դեկտեմբեր/15.12.201...
13	33631310	Դիկլոֆենակ 3.0	Սերբիա <<Հեմոֆարմ>>	Լուծույթ՝ ներարկման 3 մլ ապակե սրվակով. կոտրվող է Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն,ֆիրմային նշանի առկայություն:	Սրվակ	86,4	103 680	1200	Արագածո տնի մարզ,գյուղ Ծաղկահով իր. Հոկտեմբեր յան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
16	33691176/28	Դիբազոլ 1% 1 մլ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա>>	Լուծույթ՝ ներարկման 1% , 1 մլ ապակե սրվակով. կոտրվող է,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	24,85	29 820	1200	Արագածո տնի մարզ,գյուղ Ծաղկահով իր. Հոկտեմբեր յան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
18	33621580	Էնալապրիլ /հիդրոքլոր թիազիդ/	Հայաստան << Արփիմեդ>>	25 մգ+ 10մգ դեղին գույնի կլոր դեղահաբ, փաթեթում է խոնավությունից. մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն. ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	18,7	22 440	1200	Արագածո տնի մարզ,գյուղ Ծաղկահով իր. Հոկտեմբեր յան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
25	33642230	Լևոթիրոքսին 100մկգ	Գերմանիա << Բեռլինխեմի>>	100 մկգ դեղահաբ,փաթեթում է խոնավությունից մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն. ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	16,2	19 440	1200	Արագածո տնի մարզ,գյուղ Ծաղկահով իր. Հոկտեմբեր յան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
26	33621450/2	Լիզինոպրիլ 10 մգ	Հայաստան << Արփիմեդ>>	10 մգ դեղահաբ.փաթեթում է խոնավությունից,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն. ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	23,4	28 080	1200	Արագածո տնի մարզ,գյուղ Ծաղկահով իր. Հոկտեմբեր յան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
27	33691129/4	Կալի քլոր 4%-200մլ	Հայաստան <<ֆարմատեք>>	Լուծույթ՝ ներարկման 4% ,200 մլ պլաստիկ փաթեթով. Երկրորդային վակուում	Փաթեթ պլ	340	1 700	5	Արագածո տնի մարզ,գյուղ	5	ապրիլ մայիս հունիս

				փաթեթով, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն,ֆիրմային նշանի առկայություն					Ծաղկահովիտ իտ, Հովհաննեսի փողոց 16		օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15 12.2018/
28	33621510	Կապտոպրիլ 25մգ	Բելոռուս <<Բորիսով>>	25 մգ դեղահաբ, վախենում է խոնավությունից, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	3,82	18 336	4800	Արագածոտն մարզ, գյուղ Ծաղկահովիտ իտ, Հովհաննեսի փողոց 16	4800	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
31	33691176/51	Հալվեի հանուկ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա >>	Լուծույթ ներարկման, 5 մլ ամպուլե սրվակով, կտորված է,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	31,14	3 114	100	Արագածոտն մարզ, գյուղ Ծաղկահովիտ իտ, Հովհաննեսի փողոց 16	100	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
34	33691145	Մագնեզիումի սուլֆատ 25 % 5 մգ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա >>	Ներարկման լուծույթ 25 % 5մլ ամպուլե սրվակով, կտորված է,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	31,1	37 320	1200	Արագածոտն մարզ, գյուղ Ծաղկահովիտ իտ, Հովհաննեսի փողոց 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
35	33611160	Մետոկլոպրամիդ 2մլ	Բելոռուս <<Բորիսով>>	Լուծույթ ՆԵ և ՄՄ ներարկման 2մլ ամպուլե սրվակով, կտորված է մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն,ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	56,9	22 760	400	Արագածոտն մարզ, գյուղ Ծաղկահովիտ իտ, Հովհաննեսի փողոց 16	400	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
37	33691112	Մետրոնիդազոլ 100մլ 0.5%	Հայաստան <<ֆարմատեք>>	Կաթիլային ներարկման լուծույթ 0.5%, 100 մլ ապակե ֆլակոն, կտորված է,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Ֆլ	152	30 400	200	Արագածոտն մարզ, գյուղ Ծաղկահովիտ իտ, Հովհաննեսի փողոց 16	200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
39	33691129/5	Նատրիումի	Հայաստան	Լուծույթ ներարկման ,250 մլ պլաստիկ փաթեթով.	Փաթեթ	148	177 600	1200	Արագածոտն գյուղ	1200	ապրիլ մայիս

		բլորիդ-250մլ	<<Ֆարմատեք>>	երկրորդային վակուում փաթեթով, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն.ֆիրմային նշանի առկայություն	թ ալ				մարզ, գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16		[illegible] հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
40	33691129/1	Նատրիումի քլորիդ 0.9 %-500մլ	Հայաստան <<Ֆարմատեք>>	Լուծույթ ներարկման 0.9%, 500 մլ պլաստիկ փաթեթով, երկրորդային վակուում փաթեթով, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն.ֆիրմային նշանի առկայություն	Փաթեթ ալ	150	180 000	1200	Արագածոտնի մարզ, գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
42	33661122/2	Պարացետամոլ օշարակ 60 մլ	Հայաստան << Արփիմեդ>>	60մլ օշարակ ապակե շշերով, կոտրված է, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն.ֆիրմային նշանի առկայություն	Շիշ	287	103 320	360	Արագածոտնի մարզ, գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	360	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
48	33611390	Պիրիդօքսին 1մլ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա>>	Լուծույթ ներարկման, 1 մլ ապակե սրվակով, կոտրված է, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն. ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	16,7	5 010	300	Արագածոտնի մարզ, գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	300	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
49	33691133	Ջուր ներարկման 2մլ	Հայաստան << Երևանի քիմ դեղ ֆիրմա>>	Լուծույթ ներարկման, 2 մլ ապակե սրվակով, կոտրված է, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն. ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	18,7	9 350	500	Արագածոտնի մարզ, գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	500	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
50	33691129/2	Ռինգեր -500մլ	Հայաստան <<Ֆարմատեք>>	Լուծույթ ներարկման, 200 մլ պլաստիկ փաթեթով, երկրորդային վակուում փաթեթով, մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն.ֆիրմային նշանի առկայություն	Փաթեթ ալ	150	750	5	Արագածոտնի մարզ, գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	5	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/

51	33691214	Ռանիտիդին 150մգ	Սերբիա <<Հեմոֆարմ>>	Դեղահաբ 150 մգ,փաթեթավորումը ըստ արտադրողի։ Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	14,5	1 740	120	Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ իշխ. Հովհաննիսյան փողոց 16	120	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
52	33691129/3	Ռինգեր -250մլ	Հայաստան <<Ֆարմատեք>>	Լուծույթ ներարկման 250 մլ պլաստիկ փաթեթով, երկրորդային փաթեթավորում փաթեթով.Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Ֆլ	148	1 480	10	Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ իշխ. Հովհաննիսյան փողոց 16	10	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
54	33671113	Սալբուտամոլ 2մգ	Հայաստան << Արփիմեդ>>	2 մգ դեղահաբ, փաթեթավորումը ըստ արտադրողի։ Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն և ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	13	26 000	2000	Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ իշխ. Հովհաննիսյան փողոց 16	2000	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
56	33651131/2	Սուլֆամեթօքսազոլ-տրիմետոպրին 480մգ	Բելառուս <<Բորիսով>>	480 մգ դեղահաբ,փաթեթավորումը ըստ արտադրողի։ Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	11,1	1 332	120	Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ իշխ. Հովհաննիսյան փողոց 16	120	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
61	33691176/33	Ցեփիկալ կաթիլներ 30 մլ	Լեհաստան <<Պոլֆարմա>>	Կաթիլներ 30մլ, շշիկով, պիպետկայով, կտուփով է.Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Շշիկ	1639	27 863	17	Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ իշխ. Հովհաննիսյան փողոց 16	17	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
62	33651223/5	Փայտացման անատոքսին	Ռուսաստան <<Միկրոգեն>>	Լուծույթ ներարկման ամպուլը սրվակով, կոտրվող է.Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	296	2 960	10	Արագածոտնի մարզ.գյուղ Ծաղկահովիտ իշխ. Հովհաննիսյան փողոց 16	10	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր

										դեկտեմբեր
65	33661131	Ֆենոբարբիտալ 0.1	Հայաստան << Արփիմեդ>>	Ինդուկտոր 0,1 գաբեներգետիկ խոնավությունից,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	13,7	16 440	1200	Արագածոտնի մարզ,գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	1200	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
66	33621590/2	Ֆուրոսեմիդ 40մգ	Հայաստան << Արփիմեդ>>	40 մգ դեղահատ, փախեներում է խոնավությունից մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	դ/հ	3,11	9 330	3000	Արագածոտնի մարզ,գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	3000	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/
67	33621590/1	Ֆուրոսեմիդ 2.0	Բելոռուս <<Բորիսով>>	Լուծույթ ներարկման ապակե ամպուլով, կոտրվող է,մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	Սրվակ	22,2	53 280	2400	Արագածոտնի մարզ,գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան 16	2400	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր/15.12.2018/

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**Եթե հրավերով չի նախատեսվում առաջին փուլը ցրաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

ԳՆՈՐԴ

<<Դարմ[illegible]ԱԿ>> ՓԲԸ
«ԱԿԲԱ[illegible] ԲԱՆԿ» ՓԲԸ
Արագածոտն[illegible]մարզ,գյուղ Ծաղկահովիտ փող. Հոկտեմբերյան
[illegible]55
[illegible]
Տնօրեն՝ [illegible]կոբյան

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱՐՖԱՐՄԱՑԻԱ>> ՓԲԸ
Ք.Երևան,Ռաֆֆու 111
Բանկ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ [illegible]
Տնօրեն՝ [illegible]

Հավելված N 2
«10» 04 2018 թ. կնքված
«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	Ընդամենը տարի
1	33651111	Ամոքսիցիլին և օշարակ 250մգ/5մլ 100մլ	16740	16740	16740	25110	25110	25110	33480	33480	33480	33480
5	33671119	Ասկորբինա թթու 2մլ	14940	14940	14940	22410	22410	22410	29880	29880	29880	29880
8	33691138	Գլյուկոզա 5% 500մլ	1620	1620	1620	2430	2430	2430	3240	3240	3240	3240
11	33671130	Դիֆենհիդրամին 1% 1մլ	39330	39330	39330	58995	58995	58995	78660	78660	78660	78660
13	33631310	Դիկլոֆենակ 3.0	51840	51840	51840	77760	77760	77760	103680	103680	103680	103680
16	33691176/28	Դիբազոլ 1% 1մլ	14910	14910	14910	22365	22365	22365	29820	29820	29820	29820
18	33621580	Էնալապրիլ /Հիդրոքլոր	11220	11220	11220	16830	16830	16830	22440	22440	22440	22440

		թիազիդ/										
25	33642230	Լևոթիրոքսի ն 100մկգ	9720	9720	9720	14580	14580	14580	19440	19440	19440	19440
26	33621450/2	Լիզինոպրիլ 10 մգ	14040	14040	14040	21060	21060	21060	28080	28080	28080	28080
27	33691129/4	Կալի քլոր 4%-200մլ	850	850	850	1275	1275	1275	1700	1700	1700	1700
28	33621510	Կապտոպրիլ 25մգ	9168	9168	9168	13752	13752	13752	18336	18336	18336	18336
31	33691176/51	Հալվեի հանույկ	1557	1557	1557	2336	2336	2336	3114	3114	3114	3114
34	33691145	Մագնեզիում ի սուլֆատ 25 % 5 մգ	18660	18660	18660	27990	27990	27990	37320	37320	37320	37320
35	33611160	Մետոկլոպրամիդ 2մլ	11380	11380	11380	17070	17070	17070	22760	22760	22760	22760
37	33691112	Մետրոնիդազոլ 100մլ - 0.5%	15200	15200	15200	22800	22800	22800	30400	30400	30400	30400
39	33691129/5	Նատրիումի քլորիդ-250մլ	88800	88800	88800	133200	133200	133200	177600	177600	177600	177600
40	33691129/1	Նատրիումի քլորիդ 0.9 %-500մլ	90000	90000	90000	135000	135000	135000	180000	180000	180000	180000
42	33661122/2	Պարացետամոլ օշարակ 60 մլ	51660	51660	51660	77490	77490	77490	103320	103320	103320	103320
48	33611390	Պիրիդոքսին 1մլ	2505	2505	2505	3758	3758	3758	5010	5010	5010	5010
49	33691133	Զուր ներարկման 2մլ	4675	4675	4675	7013	7013	7013	9350	9350	9350	9350
50	33691129/2	Ռինգեր 500մլ	375	375	375	563	563	563	750	750	750	750
51	33691214	Ռանիտիդին 150մգ	870	870	870	1305	1305	1305	1740	1740	1740	1740

52	33691129/3	Ռինգեր - 250մլ	740	740	740	1110	1110	1110	1480	1480	1480	1480
54	33671113	Սալբուտամոլ 2մգ	13000	13000	13000	19500	19500	19500	26000	26000	26000	26000
56	33651131/2	Սուլֆամեթօքսազոլ-տրիմեթոպրին 480մգ	666	666	666	999	999	999	1332	1332	1332	1332
61	33691176/33	Ցեֆիկսայ կաթիլներ 30 մլ	13932	13932	13932	20897	20897	20897	27863	27863	27863	27863
62	33651223/5	Փայտացման անատոքսին	1480	1480	1480	2220	2220	2220	2960	2960	2960	2960
65	33661131	Ֆենոբարբիտալ 0.1	8220	8220	8220	12330	12330	12330	16440	16440	16440	16440
66	33621590/2	Ֆուրոսեմիդ 40մգ	4665	4665	4665	6998	6998	6998	9330	9330	9330	9330
67	33621590/1	Ֆուրոսեմիդ 2.0	26640	26640	26640	39960	39960	39960	53280	53280	53280	53280
Ընդամենը`			539403			809104			1078805			1078805

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

«ԱԿ...» ՓԲԸ

Արագածոտնի ... Հոգաբարձուների

Տնօրեն`

ՎԱՃԱՌՈՂ

<<ԱՐՓԱՐՄԱՑԻԱ>> ՓԲԸ

ք. Երևան,Րաֆֆու 111

Բանկ Հայէկոնոմբանկ ԲԲԸ

ՀՎՀՀ 02505735

Հ/Հ 163008100220

Տնօրեն`

Հավելված N 3
« 10 » 04 2018 թ կնքված
«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-1»ժամկետով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրվագ գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«16» 04 2018 թ. կնքված
«ԵԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն